ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 սեպտեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

124
(2790)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՉՈՒՄՆԵՐ ԱՅԼԵՎՍ ՉԵՆ ԼԻՆԵԼՈՒ



ՀՀ արդարադատության նախարարությունը նոր նախագիծ է ներկայացրել հանրային քննարկման: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այդ նախագծով նախարարությունն առաջարկում է «Հայաստանի Հանրապետության պետական պարգեւների եւ պատվավոր կոչումների մասին» օրենքից եւ հարակից այլ օրենքներից հանել Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի, Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարչի, Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր ճարտարապետի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր շինարարի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր բժշկի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբանի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր նկարչի, Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի, Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործչի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր լրագրողի, Հայաստանի Հանրապետության տնտեսության վաստակավոր աշխատողի, Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործչի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզչի կոչումները եւ Հայաստանի Հանրապետությունում սահմանել միայն Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվի պատվավոր կոչումը:

Ավելին՝ նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ պատվավոր կոչումների շնորհումը հաճախ, դրական հետեւանքներ ունենալու փոխարեն, բացասական ազդեցություն է ունենում առանձին մասնագիտական հանրույթի ներսում առաջացող հարաբերությունների եւ առանձին մասնագիտությունների եւ կոլեկտիվների համարժեք հանրային ընկալման ձեւավորման վրա: Նշվում է, որ, վերոգրյալի հիման վրա, առկա է անհրաժեշտություն՝ չեղարկելու օրենքով ներկայումս նախատեսված պատվավոր կոչումները եւ նախատեսելու մեկ միասնական պատվավոր կոչում:

Այսինքն՝ պատվավոր մասնագետներին գնահատելը Նիկոլ Փաշինյանի օրոք դարձել է անընդունելի:

Հայկ Մարությանն ունի 4 զավակ՝ 2 տղա եւ 2 աղջիկ: Նրա զավակները Չեխիայի քաղաքացիներ են. «Ժողովուրդ» օրաթերթն այս մասին գրել է: Օրեր առաջ Մարությանը ոչ միայն հաստատեց այս փաստը, այլեւ հայտարարեց, որ եթե իր որդիները մեծանան եւ ցանկանան ծառայել հայկական բանակում, ապա կծառայեն: Մի քաղաքական ուժի ղեկավար, որը նույնիսկ քաղաքական ծրագիր չունի, խոսում է հայրենասիրության եւ հայրենիքի պաշտպանության կարեւորության մասին, իր որդիներին դարձրել է Չեխիայի քաղաքացիներ, որպեսզի խուսափեն ծառայությունից: Ստացվում է, որ հայրենասիրություն եւ մարդասիրություն քարոզող անձն իր երեխաների մեջ սնել է այլ հայրենիք եւ սերմանել է սեր այլ հայրենիքների նկատմամբ: Իրականում հայրենասիրություն բառը այդպիսի գործիչները դարձնում են այցեքարտ՝ բացելով ժողովրդի սրտի դռները, սակայն իշխանության գալով՝ դառնագին շրջխկացնում են դռները թե՛ հայրենիքի առաջ եւ թե՛ խղճի առաջ: Հազարավոր ծնողներ մնացին անզավակ 2020թ.-ից հետո, եւ որեւէ մեկը նրանցից չէր հետաքրքրվել՝ ուզում են ծառայել հայկական բանակում, թե ոչ: Ծառայությունը մեր երկրում պարտադիր է, եւ բոլորը հավասար են օրենքի առաջ: Հայկ Մարությանը թերեւս հենց ծառայությունից խուսափելու համար է իր որդիներին Չեխիայի քաղաքացիներ դարձրել: Բայց մի՞թե հայրենիքը չի սկսվում այն սահմանից, որն արյունոտ է, մի՞թե հայրենիքի համար պարտք տալը ըստ ցանկության է:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վարչապետի գլխավոր խորհրդական Համբարձում Մաթեւոսյանն առաջիկայում գործուղվելու է դիվանագիտական կորպուս. նա դեսպան կնշանակվի: Հավելենք, որ, չնայած երիտասարդ տարիքին, Համբարձում Մաթեւոսյանը տարբեր բարձր պաշտոններ հասցրեց զբաղեցնել: Հեղափոխությունից հետո՝ 2018թ.-ին, նա նշանակվել էր Արմավիրի մարզպետ, այնուհետեւ գործուղվել էր կառավարություն: 2021թ.-ին նա նշանակվել էր փոխվարչապետ, իսկ 2023թ.-ի փետրվարի 16-ից զբաղեցնում է վարչապետի գլխավոր խորհրդականի պաշտոնը: Մեր տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանն իր խորհրդականին որոշել է հիմա էլ ավելի լավ պաշտոնի տեղավորել ու նրան դեսպան կնշանակի, սակայն դեռ որոշված չէ, թե որ երկրում: Ինչպես գործադիրի մեր աղբյուրներն են փոխանցում, դեսպան նշանակվելը Համբարձում Մաթեւոսյանի ցանկությունն է. հավանաբար վերջինս հոգնել է գործադիրում իր աշխատանքից ու որոշել է արտերկրում աշխատանքի անցնել: Տեղեկությունը ճշտելու համար փորձեցինք կապ հաստատել նաեւ Համբարձում Մաթեւոսյանի հետ: Նրա փոխարեն պատասխանեց օգնականը եւ ասաց, որ նման բան չկա, առաջին անգամ մեզանից է լսում: Հիշեցնենք՝ երբ Մաթեւոսյանը փոխվարչապետի պաշտոնին հրաժեշտ տվեց, դրանից առաջ էլ մեզ տված հարցազրույցում հերքում էր իր հնարավոր հրաժարականը: Չնայած հերքումներին՝ նկատենք, որ արդեն երեկվանից սկսվել են փոփոխությունները դիվանագիտական կորպուսում, եւ մի շարք դեսպաններ հետ են կանչվել իրենց պաշտոններից: Աննա Աղաջանյանը հետ է կանչվել Բելգիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպանի, Ալեքսանդր Արզումանյանը՝ Շվեդիայի Թագավորությունում, Դանիայի Թագավորությունում, Նորվեգիայի Թագավորությունում, Ֆինլանդիայում եւ Իսլանդիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից: Սամվել Մկրտչյանն էլ հետ է կանչվել Լեհաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից:

Արդեն «խաղատան կարգավիճակ» ստացած Wildberries-ը ինչպես աջակցում է հայաստանյան շուկայի բազմազանությանը, այնպես էլ վնասում է Հայաստանի տնտեսությանը: Վերջին մի քանի ամիսներին Wildberries-ում ժամանակ անցկացնելը դարձել է հայաստանաբնակների օրվա մի մասը: Ամեն րոպե ինչ-ինչ փնտրտուքների մեջ են մարդիկ. ինչ անհրաժեշտ է լինում, առանց տեղի շուկան ուսումնասիրելու, միանգամից ապրանքը որոնում են Wildberries օնլայն խանութում, գտնում համեմատաբար մատչելի տարբերակներ եւ գնում: Սրա պատճառն այն է, որ օգտատերերը գտել են ավելի հեշտ, հնարամիտ եւ էժան տարբերակ ապրանքները ռուսական շուկայից ավելի մատչելի տարբերակով պատվիրելու համար: Սրա մասին մենք նախկինում գրել էինք: Հենց այս պատճառով էլ Wildberries-ը շատ արագ դարձավ Հայաստանի 1000 խոշոր հարկատուներից մեկը, իսկ մի օգտատիրոջ հաշվով վերջին 6 ամսվա ընթացքում կատարվել է 3 մլն գնում: Ինչքան էլ Wildberries-ը ավելացնում է Հայաստանի պետական բյուջեի գումարները, այնքան էլ սառեցնում է հայկական ապրանքաշրջանառությունը, եւ տուժում են տնտեսվարողները: Այդ պատճառով էլ երեկ կառավարության առաջ բողոքի ակցիա անցկացրած տնտեսվարողները պահանջել են Պետական եկամուտների կոմիտեից արգելել ռուսական տարբերակով ապրանքներ պատվիրելու հնարավորությունը: Ի պատասխան այս բողոքի՝ ՊԵԿ-ը դիմել է Wildberries-ին, որպեսզի վերահսկողություն սահմանեն եւ արգելափակեն «զարտուղի» տարբերակով գնումներ կատարելը: Wildberries-ը, սակայն, պատասխան դեռ չի տվել: Այսինքն՝ հավանականությունը, որ Հայաստանում կարգելվի ռուսական տարբերակով ապրանքներ պատվիրելը, շատ մեծ է: Եւ տուժում է դարձյալ ՀՀ բնակիչը՝ զրկվելով համեմատաբար էժան շուկայից գնումների հնարավորությունից:

ԶՐՈՒՅՑ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ

Հայաստանում եւ Արցախում իրավիճակը շարունակում է լարված մնալ: Ադրբեջանական կողմը գրեթե ամենօրյա ռեժիմով սադրանքների է դիմում Հայաստանի սահմանների ուղղությամբ, բացի դա, մեծացնում է ճնշումները նաեւ Արցախում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ադրբեջանագետ, պատմական գիտությունների թեկնածու Տաթեւիկ Հայրապետյանը, անդրադառնալով Հայաստանում եւ Արցախում ստեղծված իրավիճակին, նշում է՝ Ադրբեջանը կցանկանա լայնամասշտաբ ռազմական գործողությունների գնալ, բայց միջազգային վերջին զարգացումները զսպում են նրա ախորժակը եւ թույլ չեն տալիս էլ ավելի լարել իրավիճակը:

-Իրականում Ադրբեջանը արդեն տեւական ժամանակ փորձում է բավական բարձր պահել լարումը: Իրենք անընդհատ հրապարակումներ են անում նոր էսկալացիայի, հնարավոր գործողությունների մասին՝ դեռեւս օգոստոսի կեսերիս սկսած: Տպավորությունն այնպիսին է, որ իրենք իրապես կցանկանան գնալ ռազմական գործողությունների՝ իրենց վարած քաղաքականության համաձայն պատերազմի դաշտում ցանկանալով իրավիճակ փոխել, ապա դա թելադրել բանակցային սեղանի շուրջ: Այդուհանդերձ, որոշ զարգացումներ միջազգային առումով այլեւս թույլ չեն տալիս, որ իրենք առնվազն լայնամասշտաբ գործողությունների գնան, բայց իրենց ծրագիրը հստակ է: Վերջերս Ադրբեջանում էր Թուրքիայի պաշտպանության նախարարը, դրանից հետո Ադրբեջանի պաշտպանության նախարարն էր մեկնել Թուրքիա: Այդ ժամանակ Սոթքում սահմանային լարում կար, եւ Թուրքիայի պաշտպանության նախարարը հայտնեց, որ իրենք աջակցում են Ադրբեջանի արդարացիորեն մղած պատերազմին: Սրան զուգահեռ՝ նաեւ Թուրքիայի արտաքին գործերի նախարարն էր Իրանում: Ավելի ուշ Իրանից վերահաստատեցին իրենց դիրքորոշումը, այն է՝ իրենք թույլ չեն տա նման զարգացումներ, եւ, բնականաբար, այս ամենը նախազգուշացում էր, բայց, ընդհանուր առմամբ, ակնհայտ է, որ իրենք կցանկանան գնալ իրավիճակի լարման ճանապարհով:

-Այսինքն՝ առաջիկայում ավելի լայնամասշտաբ ռազմական գործողություններ հնարավո՞ր են, թե՞ Ադրբեջանը կսահմանափակվի միայն այսպես՝ իրավիճակի տեղային լարմամբ:

-Թեպետ տեղեկատվական-քարոզչական առումով իրենք փորձում են նման նախապատրաստություն տեսնել, սակայն հստակ տեղեկատվության համար պետք է օպերատիվ իրավիճակին տիրապետել զորքերի կուտակման, զինհամալրման ու այլնի մասին, որը, կարծում եմ, որեւէ փորձագետ չի կարող ունենալ, բայց միջազգային առումով ես դեռեւս տեսնում եմ, որ կան զսպաշապիկներ, եւ կանաչ լույսը դեռեւս չի վառվում: Այնուամենայնիվ, չեն բացառվում հետագա սադրանքները:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿԱՐԵՎՈՐ

ՀԱԳԵՑԱԾ ՍԵՊՏԵՄԲԵՐ

Խորհրդարանականների մոտ ողջ սեպտեմբերը «հագեցած» կլինի գործուղումներով:

Սեպտեմբերի 4-7-ը Գերմանիա գործուղման կմեկնեն ՔՊ-ական պատգամավորներ Անդրանիկ Քոչարյանը եւ Քրիստինե Պողոսյանը: Իշխանական պատգամավորները Բեռլինում կմասնակցեն «Ճգնաժամին արձագանքելը եւ ժողովրդավարական կայունության ձեւավորումը, խորհրդարանների դերը» թեմայով քննարկմանը: Պատգամավորների գործուղման հետ կապված բոլոր ծախսերի վճարումը կկատարի հրավիրող կողմը:

ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը սեպտեմբերի 7-9-ը կգործուղվի Ֆրանսիա Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) իրավական հարցերի եւ մարդու իրավունքների հանձնաժողովի նիստի աշխատանքներին մասնակցելու համար, իսկ սեպտեմբերի 24-26-ը Վլադիմիր Վարդանյանը կմասնակցի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորների ընտրության հանձնաժողովի նիստի աշխատանքներին, կրկին՝ Փարիզում:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) իրավահավասարության եւ խտրականության դեմ պայքարի հարցերի հանձնաժողովի նիստի աշխատանքներին մասնակցելու համար ՔՊ-ական մյուս պատգամավոր Հռիփսիմե Գրիգորյանը սեպտեմբերի 13-16-ը կգործուղվի Փարիզ:

Ընդդիմադիր պատգամավոր Արմեն Ռուստամյանը եւս կգործուղվի Փարիզ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) մոնիտորինգի հանձնաժողովի նիստի աշխատանքներին մասնակցելու համար:

Պատգամավորների գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը, կկատարվեն պետբյուջեի հաշվին:

ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախի պետնախարարի խորհրդական Արտակ Բեգլարյանի ֆեյսբուքյան էջից տեղեկանում է, որ Բեգլարյանը իրեն չի համարում նախագահի դիրքի համար համապատասխան անձ:

«Պարզվում է՝ երեկ մի տելեգրամյան ալիք բացարձակ կեղծ տեղեկություն է հրապարակել, թե, իբր, տարբեր ներքին ու արտաքին ուժեր լոբբինգ են անում Արցախի Հանրապետության նախագահի պաշտոնում իմ թեկնածության օգտին:

Կարող եմ միանշանակորեն պնդել, որ ընդհանրապես նման թեմա չեմ քննարկել որեւէ մեկի հետ, նույնիսկ այդպիսի գաղափար չի անցել մտքովս, քանի որ նման ցանկություն ո՛չ ունեմ, ո՛չ էլ ունեցել եմ: Իսկ արտաքին որեւէ ուժի հետ ինձ կապողները թող իրենց պատվիրատուների մասին մտածեն: Ես ձեր տեսակից չեմ, որ ներքին որեւէ հարց լուծելու համար արտաքին ուժի դիմեմ:

Ավելին կասեմ՝ ես ինքս ինձ չեմ համարում նախագահի դիրքի համար համապատասխան անձ՝ տարբեր հանգամանքներ հաշվի առնելով: Ես պատրաստ եմ անձնվիրաբար ծառայել Հայրենիքիս իմ ողջ կարողություններով, բայց յուրաքանչյուր ոք պետք է իրեն համապատասխան դիրքում ու միջոցներով ծառայությունն իրականացնի:

Ով էլ ընտրվի հանրապետության նախագահ՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգով, ես պատրաստակամ եմ հնարավորինս աջակցելու նրան, որ հատկապես այս ծանրագույն շրջանում կարողանա Արցախն առաջնորդել մեր առջեւ ծառացած ահռելի մարտահրավերները պատվով հաղթահարելու ուղով:

Ես ինչի մասին եմ մտածում, ոմանք՝ ինչի»,- գրել է նա:

ՀԱՄԱԶԳԵՍՏ՝ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ դատապարտյալների եւ կալանավորների շրջանում նոր բունտ է հասունանում: Կալանավորները հրաժարվում են գնալ դատարան: Բանն այն է, որ Գլխավոր դատախազությունը պարտադրում է, որ դատապարտյալները հատուկ նախատեսված համազգեստը հագնեն ու նոր ներկայանան դատարաններ՝ իրենց գործերով նիստերին մասնակցելու, սակայն վերջիններս հրաժարվում են կրել նախատեսված հագուստը ու չեն ներկայանում դատական նիստերին: «Ժողովուրդ» օրաթերթը, իրավիճակով պայմանավորված, դիմեց Գլխավոր դատախազություն, որտեղից ի պատասխան՝ հայտնեցին. «Գլխավոր դատախազության պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետն այսօր՝ սեպտեմբերի 4-ին, գրություն է հասցեագրել ԱՆ քրեակատարողական ծառայության պետի պաշտոնակատարին: Վարչության պետը գրությամբ բարձրացրել է 2023 թվականի օգոստոսի 30-ին կայացած դատական նիստին ՔԿՀ-ի դատապարտյալի կողմից սպորտային հագուստով ներկայանալու հանգամանքը (նիստի ընթացքում քննվել է դատապարտյալի՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը դատարան չներկայացնելու մասին ՔԿՀ պետի որոշումը): Բացի սպորտային հագուստով դատական նիստին ներկայանալուց, դատապարտյալը հայտարարել է, որ ինքն ընդունում է քրեական ենթամշակույթը եւ շարունակելու է ընդունել: Նշենք, որ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի 111-րդ կետի համաձայն՝ դատապարտյալներն ապահովվում են միասնական նմուշի հագուստով, որը կրում են պատժի ողջ ընթացքում՝ որոշակի բացառություններով: Գլխավոր դատախազության համապատասխան վարչությունը իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, ի թիվս այլնի, ապահովում է պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման վայրերում իրավական ակտերի պահանջների միատեսակ կիրառությունը: Դատապարտյալի կողմից դատարան սպորտային հագուստով ներկայանալու հանգամանքը հիմք ընդունելով՝ վարչության պետը ՔԿԾ պետի պաշտոնակատարին ուղղված գրությամբ առաջարկել է պարզել դատապարտյալին միասնական նմուշի համազգեստ հատկացված լինելու եւ քրեական ենթամշակույթն ընդունելու հանգամանքները»:

Այսինքն՝ կոնկրետ քրեական ենթամշակույթ կրող անձն իր վարմունքով ստիպել է ողջ համակարգի համար խաղի նոր կանոն սահմանել: Տեսնենք՝ արդյոք քաղաքական բանտարկյալներին եւս դա կվերաբերի:

ԿԺԱՄԱՆԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հաջորդ շաբաթ Ֆրանսիայից եւ ԵԱՀԿ-ից պատվիրակություններ կժամանեն Հայաստան:

«Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ-ից տեղեկացավ, որ սեպտեմբերի 13-16-ը Հայաստան կժամանի Ֆրանսիայի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ժան-Լուի Բուրլանժի գլխավորած պատվիրակությունը: Ֆրանսիայից ժամանող պատվիրակությանը կդիմավորի ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը: Սեպտեմբերի 11-15-ը Հայաստան կժամանի ԵԱՀԿ ԽՎ գլխավոր քարտուղարի տեղակալ Գուստավո Պարալլեսի գլխավորած պատվիրակությունը: Պատվիրակությանը կդիմավորի Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՆԴԻՊԵԼ Է ԲԱՅՐԱՄՈՎԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հունգարիա կատարած այցի շրջանակում Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը Բուդապեշտում հանդիպել է Եվրամիության հարեւանության եւ ընդլայնման քաղաքականության գծով հանձնակատար Օլիվեր Վարհելիին:

Նշվել է, որ հանդիպման ժամանակ քննարկվել են Ադրբեջանի եւ ԵՄ-ի միջեւ հարաբերությունները, այդ թվում՝ ընթացիկ իրավիճակը տարածաշրջանում:

«Ջեյհուն Բայրամովը, նշելով Ադրբեջանի եւ ԵՄ-ի միջեւ համագործակցության բազմակողմ օրակարգի առկայությունը, գոհունակությամբ տեղեկացրել է, որ այդ կոնկրետ ոլորտում կան մի շարք հարցեր, այդ թվում՝ քաղաքական, տնտեսական, առեւտրային, տրանսպորտային, էներգետիկ անվտանգության եւ այլն: Նշվել է, որ նոր համակողմանի համաձայնագրի նախագիծը, որը նախատեսվում է ստորագրել Ադրբեջանի եւ ԵՄ-ի միջեւ, կարող է կարեւոր դեր խաղալ կապերի հետագա զարգացման գործում: Ընդգծվել է Ադրբեջանի եւ ԵՄ-ի միջեւ էներգետիկ ոլորտում ռազմավարական գործընկերության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի կարեւորությունը. այն նախատեսում է համատեղ գործունեություն էներգետիկ անվտանգության ոլորտում, ինչպես նաեւ այլընտրանքային էներգետիկ ռեսուրսների զարգացում: Խոսելով «Միջին միջանցք - Տրանսկասպիյսկ» միջազգային տրանսպորտային երթուղու պոտենցիալի ընդլայնման ոլորտում Ադրբեջանի առաջադրած նախաձեռնությունների մասին՝ Ջեյհուն Բայրամովը նշել է, որ տարածաշրջանում տրանսպորտային բոլոր հաղորդակցությունների, այդ թվում՝ Զանգեզուրի միջանցքի բացումը, կարող է զգալի ավանդ ներդնել այդ գործընթացում»,- մեջբերել է ԶԼՄ-ն:

ՉԵՆ ՀԵՌԱՆԱ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Պեսկովն արձագանքել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի այն հայտարարությանը, թե տեսնում են, որ Ռուսաստանը իր կողմից ձեռնարկվող կամ չձեռնարկվող քայլերի բերումով ինքն է հեռանում Հարավային Կովկասի տարածաշրջանից:

«Մենք խորը հարգանք ենք տածում վարչապետ Փաշինյանի նկատմամբ, գնահատում ենք նրա եւ նախագահ Պուտինի աշխատանքային եւ շատ կառուցողական հարաբերությունները, բայց այդ թեզերի հետ չենք կարող համաձայնել: Ռուսաստանը ոչ մի տեղ չի պատրաստվում գնալ: Ռուսաստանը շարունակում է հետեւողական, շատ կարեւոր դեր խաղալ իրավիճակի կայունացման եւ հակամարտության վերացման գործում: Այս համատեքստում կարեւոր է տարածաշրջանի բոլոր պետությունների հանձնառությունը Լեռնային Ղարաբաղի հարցով եռակողմ հայտարարություններին: Նոր իրադարձություններ են եղել, որոնք որոշակիորեն փոխել են իրավիճակը, սակայն դա չի նշանակում, թե Ռուսաստանը ինչ-որ կերպ շեղվում է իր գործունեությունից»,- ասել է նա:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՄԱՐԻԱ ԶԱԽԱՐՈՎԱՆ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան առաջարկել է ՀԱՊԿ առաքելություն տեղակայել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանամերձ տեղամասում:

«Մենք ցավակցում ենք Սոթք գյուղում հայ զինծառայողների առիթով եւ կոչ ենք անում կողմերին ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք սրում են էսկալացիան, լարվածությունը եւ, առավել եւս, հանգեցնում են մարդկային զոհերի: Այս ողբերգական միջադեպը մեկ անգամ եւս հաստատեց Հայաստանում տեղակայված Եվրամիության առաքելության ոչ բարձր արդյունավետությունը»,- ասել է Զախարովան ամենշաբաթյա ճեպազրույցում:

Նրա խոսքով՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մշտական ռիթմիկ աշխատանքի կատարմանը հայ-ադրբեջանական սահմանի սահմանազատման եւ սահմանագծման գծով՝ ռուսական խորհրդատվական աջակցությամբ, վստահության ամրապնդման համալիր միջոցառումների միաժամանակյա իրականացմամբ. «Մենք նաեւ կողմ ենք սահմանամերձ շրջանում ՀԱՊԿ առաքելության տեղակայմանը, եւ այստեղ, իհարկե, գնդակն արդեն Երեւանի դաշտում է: Կազմակերպության մնացած անդամները նման քայլի պատրաստակամություն են հայտնել»:

«Ռուսական կողմը՝ արտաքին գործերի նախարարության, պաշտպանության նախարարության, այլ գերատեսչությունների գծով մշտական կապի մեջ է բոլոր շահագրգիռ կողմերի հետ եւ քայլեր է ձեռնարկում Արցախում հումանիտար ճգնաժամը կարգավորելու համար»,- հայտարարել է Զախարովան:

Նրա խոսքով՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերություններ կարգավորման հարցերով հատուկ ներկայացուցիչ Իգոր Խովաեւը այդ հարցը մանրամասն քննարկել է օրերս Երեւան կատարած իր այցի ընթացքում, իսկ այժմ քննարկումներ է ունենում Ադրբեջանում:

«Մենք գործում ենք՝ 2020-2022 թթ. Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների եռակողմ բոլոր հայտարարությունների համաձայն: Մենք հանդես ենք գալիս Լեռնային Ղարաբաղ հումանիտար օգնության անխոչընդոտ մուտքի թույլատրման օգտին ինչպես Լաչինի, այնպես էլ Աղդամի երթուղիներով, եւ կոչ ենք անում խուսափել տվյալ հարցի անտեղի քաղաքականացումից»,- ասել է Զախարովան:

Մարիա Զախարովան, հրաժարվելով մեկնաբանել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարցազրույցը իտալական La Repubblica թերթին, նշել է, որ «Հայաստանի վարչապետը վերջին օրերին քիչ բան չի ասել»:

«Պարզապես ամփոփելով այդ բոլոր հայտարարությունները՝ ուզում եմ ասել, որ պետք է կարողանալ պատասխան տալ սեփական արարքների համար, այլ ոչ թե մեղավորներ փնտրել եւ դա անել անընդհատ, ամեն առիթով: Պետք է պատասխանատվություն կրել, սեփական պատասխանատվությունը, այլ ոչ թե ուրիշի ուսերին բարդել, եթե նրանք դա մեղք են համարում կամ, չգիտեմ, այդ սեփական պատասխանատվությունը դնել էլի ինչ-որ մեկի վրա: Սրանով է քաղաքական գործիչը, պետական գործիչը տարբերվում պատահական մարդուց, որը չի մտածում իր երկրի ազգային շահերի մասին: Եվս մեկ անգամ նշեմ. պետք է կարողանալ պատասխան տալ սեփական արարքների համար, այլապես դա մի քիչ նման է պարողի պարագային»,- ասել է Զախարովան:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Արմեն Գասպարյանը նշանակվել է ՀՀ առողջապահության փոխնախարար:

Համապատասխան որոշումը վարչապետը ստորագրել է սեպտեմբերի 5-ին:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով՝ Արմեն Գասպարյանին նշանակել առողջապահության նախարարի տեղակալ»,- նշված է որոշման մեջ:

ԱՐՑԱԽԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Երեկ Արցախի առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից 9 բուժառու ուղեկցողների հետ միասին անհետաձգելի մասնագիտացված բժշկական օգնություն ստանալու համար Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ տեղափոխվել են ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ:

«Արեւիկ» բուժմիավորումում այս պահին ստացիոնար բուժում է ստանում 24 երեխա, 7-ը գտնվում է նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքում:

«Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ստացիոնար բուժում է ստանում 90 հիվանդ, 3 բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որից 1-ը՝ ծայրահեղ ծանր վիճակում:

ՆՈՐ ԴԵՍՊԱՆՆԵՐ

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրով՝ մի շարք երկրներում ՀՀ նոր դեսպաններ են նշանակվել:

Մասնավորապես, Միսակ Բալասանյանը նշանակվել է Իրաքում ՀՀ դեսպան:

Ալեքսանդր Արզումանյանը հետ է կանչվել Շվեդիայի Թագավորությունում, Դանիայի Թագավորությունում, Նորվեգիայի Թագավորությունում, Ֆինլանդիայի Հանրապետությունում եւ Իսլանդիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից եւ նշանակվել Լեհաստանում ՀՀ դեսպան:

Աննա Աղաջանյանն էլ նշանակվել է Շվեդիայում ՀՀ դեսպան:

Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս գրել էր, որ Միսակ Բալասանյանի նշանակման որոշումը կայացվել է:

ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ ՄԵԿՆԱՐԿԵՑ

Սեպտեմբերի 5-ին մեկնարկում է բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունների հայտագրումը:

Գնահատման եւ թեստավորման կենտրոնից «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացնում են, որ ԳԹԿ անձնական համարները դիմորդները պետք է ստանան այն բուհերից, որտեղ դիմում են:

ՎԱՐՈՒՅԹ

ՀԵՏԵՎԻՑ ՄՈՏԵՑԵԼ ԵՆ, ՀԱՐՎԱԾԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում ավարտվել է մի խումբ անձանց կողմից Է. Ղազարյանի առողջությանը թեթեւ վնաս պատճառելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով՝ երկու մեղադրյալի մասով նախաքննությունը:

Իրականացված քննչական եւ վարութային անհրաժեշտ գործողությունների արդյունքում պարզվել է, որ Առինջ գյուղի 31-ամյա բնակիչը, 37 եւ 48-ամյա համագյուղացիների հետ համաձայնության գալով Էդգար Ղազարյանին մարմնական վնասվածքներ պատճառելու հանգամանքի շուրջ, խմբի կազմում վերջինիս մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ, 2022թ. հոկտեմբերի 18-ին՝ ժամը 10:45-ի սահմաններում, 48-ամյա համագյուղացու կողմից վարած Opel մակնիշի ավտոմեքենայով գնացել են տուժողի՝ Երեւան քաղաքի Եղբայրության փողոցում գտնվող բնակության վայր, որտեղ դարանակալել են՝ սպասելով նրան: Ժամը 11:24-ի սահմաններում, երբ Է.Ղազարյանը վերադարձել է տուն, 31 եւ 37-ամյա տղամարդիկ շենքի բակում հետեւից մոտեցել եւ, մեկը մյուսի գործողությունները լրացնելով, ձեռքերով եւ ոտքերով բազմաթիվ հարվածներ են հասցրել նրա մարմնի տարբեր մասերին, այդ թվում՝ գլխի, դեմքի շրջաններին՝ դիտավորությամբ նրա առողջությանը պատճառելով վնաս, եւ դիմել փախուստի:

Նշենք, որ քննությամբ պարզվել է, որ 48-ամյա տղամարդը ոչ միայն օժանդակել է համագյուղացիներին՝ հանցագործության կատարումը հեշտացնելու նպատակով միջոց տրամադրելով վերջիններիս, այլեւ Է. Ղազարյանի նկատմամբ գործադրված բռնության ողջ ընթացքը նկարահանել է բջջային հեռախոսով, որից հետո նույնպես դիմել է փախուստի:

Ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա՝ 31-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, իսկ 48-ամյա տղամարդուն՝ 46-171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Հավելենք, որ վերջիններիս մասով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու նպատակով:

37-ամյա տղամարդու մասով նախաքննությունը շարունակվում է: Վերջինիս մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը, եւ հայտարարվել է հետախուզում:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ վերջինիս հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու ուղղությամբ:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ սեպտեմբերի 1-ին էր գրել, որ Լեհաստանում Հայաստանի նախկին դեսպան Էդգար Ղազարյանին ծեծի ենթարկելու գործով նախաքննության ավարտ է հայտարարվել:

Հավելենք, որ Էդգար Ղազարյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց՝ այս գործում մաս կա անջատված Քննչական կոմիտեում, ըստ որի՝ նախաքննական մարմինը փնտրում է պատվիրատուին: Վերջինիս խոսքով՝ ինքը մշտապես հայտնել է՝ իր նկատմամբ բռնություն կիրառելու պատվիրատուն ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է:

ՔՆՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Դանակահարություն է տեղի ունեցել Կենտրոն վարչական շրջանի Զաքյան փողոցում:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ գիշերը՝ ժամը 2:00-ի սահմաններում, թեժ իրավիճակ է եղել Զաքյան փողոցի 3 հասցեի մոտ: Ժամը 2:00-ի սահմաններում Ա. Մանուկյանը իրավապահներին է զանգահարել ու հայտնել, որ 4 տղա այս պահին դանակով հարվածել են իրեն եւ երեխաներից մեկին, իսկ մյուսին էլ այս պահին ծեծի են ենթարկում:

Դեպքի վայր են շտապել իրավապահները եւ ականատես են եղել ծեծկռտուքի, դանակահարության: Պարզվել է, որ Արտակ Պետրոսյանն անցանկալի արտահայտություն է արել Անկա Մանուկյանի հասցեին, ինչի արդյունքում վեճ, վիճաբանություն է սկսվել, ու դանակահարել են Արտակ Պետրոսյանին:

Տեղեկացանք՝ դեպքով զբաղվում են իրավապահները:

ԿԱՇԱՌՔ՝ 17 ԱՆՁԻՑ

2023 թվականի օգոստոսի 28-ին դատախազը հաստատել է 17 անձի կողմից կաշառք տալու միջոցով վարորդական վկայականներ ստանալու փորձ կատարելու վերաբերյալ մեղադրական եզրակացությունը եւ քրեական վարույթի նյութերի հետ հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով հիմնավորվել է, որ 2023 թվականի մարտ-մայիս ամիսներին Հայաստանի Հանրապետության 17 քաղաքացի, առանց տեսական եւ գործնական քննությունները հանձնելու, վարորդական վկայականներ ստանալու եւ վարորդական վկայականում նոր կարգ ավելացնելու նպատակով քաղաքացի Գ.Գ.-ին տվել են 70 հազարից մինչեւ 300 հազար ՀՀ դրամ: Գ.Գ.-ն, ի սկզբանե նպատակ չունենալով կաշառք տալ որեւէ պաշտոնատար անձի, կաշառքի միջնորդության պատրվակով ստացել է ընդհանուր առմամբ 5 մլն 931 հազար դրամ: Դատախազը 2023 թվականի հունիսի 14-ին եւ 16-ին հանրային քրեական հետապնդում էր հարուցել վերոնշյալ 17 անձի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 44-436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (իր կամ իր մատնանշած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար կաշառք տալու փորձը):

Գ.Գ.-ի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը հարուցվել էր 2023 թվականի հունիսի 24-ին՝ Քրեական օրենսգրքի 440-րդ հոդվածի 2-րդ մասով (կաշառքի միջնորդության պատրվակով գույք՝ ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որեւէ այլ առավելություն ստանալը) (25 դրվագ), 46-44-436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (կաշառք տալու դրդչության փորձ) (24 դրվագ) եւ 46-44-436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ու 3-րդ կետերով (խոշոր չափերով կաշառք տալու դրդչության փորձ) (1 դրվագ): Դատախազը 2023 թվականի հուլիսի 4-ին հաստատել էր մեղադրական եզրակացությունը եւ քրեական վարույթի նյութերի հետ հանձնել դատարան:

ԿԱՐԵՎՈՐ

ՏՆՕՐԵՆՆ ՈՒ ԹՄՐԱՆՅՈՒԹԸ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել Վանաձորի դպրոցներից մեկի փոխտնօրենի մոտ թմրանյութ հայտնաբերելու դեպքից: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ դպրոցի փոխտնօրենը այս պահին ձերբակալված է: Իսկ ի՞նչ է նա բացատրել իրավապահներին, ինչո՞ւ է իր մոտ թմրանյութ պահել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նա բացատրել է, թե, իբր, կաթուցիչն ու թմրանյութը գտել է: Իսկ գտել է, թե անձամբ է օգտագործում, կպարզեն իրավապահները:

Հիշեցնենք, որ Տարոնի քրեական հետախույզները տեղեկություններ էին իրացրել սեպտեմբերի 3-ին: Երեկոյան ժամը 7.30-ին ձեռնարկած միջոցառումների արդյունքում Վանաձորի Տիգրան Մեծի փողոցում ձերբակալվել եւ ոստիկանության Տարոնի բաժին էր բերվել 43-ամյա մի տղամարդ, որի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել էր կաթուցիչ՝ դեղնականաչավուն զանգվածով:

Դպրոցի փոխտնօրեն տղամարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Լոռու մարզային քննչական վարչություն: Հանգամանքները պարզվում են:

ՏԵՂԱՓՈԽԵՑԻՆ ՄԵԿՈՒՍԱՐԱՆԻՑ

Երեկ ԱԱԾ մեկուսարանից ՀՀ վերաքննիչ դատարան տեղափոխեցին ԱԺ նախկին պատգամավոր Լեւոն Սարգսյանին՝ Ալրացաղի Լյովիկին:

Հիշեցնենք, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննված քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցության հիման վրա՝ ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Լ. Ս.-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ վերջինս իր մտերիմ Ա. Կ.-ի եւ ՀՀ ոստիկանության նախկին աշխատակից Ա. Ն.-ի միջոցով կազմակերպել է 2008թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ ԿԱ մաքսային կոմիտեի նախկին ղեկավար Արմեն Ավետիսյանի նկատմամբ հանցավոր համագործակցության կողմից առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 45 միլիոն ՀՀ դրամ արժեքով գույքի հափշտակություն կատարելու նպատակով իրականացված ավազակային հարձակումը:

Նույն հանցագործությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակով օժանդակելու համար մեղադրանք է առաջադրվել նաեւ Լ. Ս.-ի ազգական Ս. Ղ.-ին: Քրեական գործի նախաքննության ընթացքում Լ. Ս.-ի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը:

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում ՀՀ ԿԱ մաքսային կոմիտեի նախկին նախագահ Արմեն Ավետիսյանի նկատմամբ իրականացված ավազակային հարձակման, ինչպես նաեւ այլ հանցագործությունների կատարման համար Ալրաղացի Լյովիկը դատապարտվեց ազատազրկման՝ 9 տարի ժամկետով, իսկ նրա ազգական Սուրեն Ղազարյանը՝ 8 տարվա ազատազրկման: Լեւոն Սարգսյանը դատարանի որոշումը բողոքարկել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որտեղ քննությունը դեռեւս շարունակվում է:

ՔՆՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 1-ից 4-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 127 դեպք, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՆՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ

Այս տարի Տավուշի մարզում բազում բնական աղետներ են եղել, գյուղացիական տնտեսությունները մեծ վնասներ են կրել: Մայիսի 31-ին կարկտահարություն է եղել Նոյեմբերյան խոշորացված համայնքի սահմանամերձ Ոսկեպար, Իջեւան խոշոր համայնքի Կիրանց եւ Աճարկուտ բնակավայրերում: Հունիսի 6-ին տեղացած հորդ անձրեւները եւ դրանցից առաջացած սելավները մեծ վնասներ են պատճառել Նոյեմբերյան, Կողբ, Դովեղ բնակավայրերի բնակիչների գույքին, ցանքատարածություններին, սելավը քշվել-տարել է ընտանի կենդանիներ, վնասվել են առնվազն 4 մարդատար ավտոմեքենա: Հունիսի 19-ի երեկոյան Իջեւան քաղաքում տեղի ունեցած կարկտահարությունը, քամին, ուժեղ անձրեւից գոյացած սելավները մեծ վնասներ են պատճառել քաղաքի տնտեսություններին: Օգոստոսի 2-ի երեկոյան շուրջ կես ժամ տեղացած կարկուտը ոչնչացրել է Իջեւան համայնքի Լուսաձոր գյուղի խաղողի, պտղատու այգիների, բանջարանոցների բերքը, ջարդել գյուղացիների տների շիֆերից տանիքներ, ապակե պատուհաններ, վնասել ավտոմեքենաների ծածկեր, լուսաձորցիների արեւային մարտկոցները: Համայնքային եւ Տավուշի մարզպետարանի հանձնաժողովները հաշվարկել են բնական տարերքի պատճառած վնասների չափերը: Տավուշի մարզպետարանից տեղեկացա, որ Տավուշի մարզի համայնքներում 2023 թվականին բնական աղետներից (կարկտահարություն, սելավ) տուժած բնակիչներին փոխհատուցում կամ աջակցություն պետական բյուջեից չի ցուցաբերվել: Տավուշի մարզպետարանից տեղեկացա նաեւ, որ 2023թ. օգոստոսի 25-ի դրությամբ Տավուշի մարզպետարանի աշխատակիցները պետական բյուջեից ստացել են 50 միլիոն 395 հազար դրամ պարգեւավճար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՆՔՈՒՄ

«Վալեքս» ընկերության ներկայացուցիչները նախատեսում են Այգեձորի տարածքում եւ Բերդ համայնքի սարում պղնձի հանքավայրի երկրաբանական հետազոտություններ կատարել: Նրանք այդ նպատակով արդեն հանդիպում են ունեցել Բերդի համայնքապետարանում: Նախատեսվում է այդ նպատակով սեպտեմբերի 29-ին Բերդում հանրային լսումներ անցկացնել: Բերդ համայնքի բնակիչներն այդ լուրից անհանգստացած են, նրանք չեն ցանկանում, որ երկրաբանական հետազոտություններից հետո Բերդ համայնքի տարածքում մետաղական հանքավայր գործի: Բերդի բնակիչներն ասում են, որ Արցախում Կաշենի հանքավայրի փակվելուց, Լոռիում Թեղուտի հանքավայրի անհաջողություններից հետո «Վալեքս» ընկերությանը ցանկանում է Բերդում հանքավայր շահագործել: Տավուշի մարզի տարածքում նորագույն շրջանում երբեք մետաղական հանքավայր չի գործել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՑԱԽ

ԲԼՈԿԱԴԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՂ ՄԵՐՈՒՆԴ

Արցախը գրեթե 300 օր է՝ շրջափակման մեջ է, օրեցօր դակասում է սնունդը, իսկ արցախցին իր չհանձնվող տեսակով դայֆարում է: Դայֆարի օրինակներից է արցախցի փոքրիկների ստեղծած այգին, որը նախկինում ծաղկանոց է եղել: Ըստ արցախցիների՝ ժամ առ ժամ խորացող շրջափակման դժվարություններն արդեն հաղթահարելի են:

Արցախցի երեխաները, դպրոցական առօրյայից զատ, զբաղվում են այգեգործությամբ: Արցախի թաղամասերի բնակելի շենքերի ծաղկանոցները վաղուց դարձել են բանջարաբոստանային այգի:

Արցախցի Անահիտ Արզումանյանը «Ժողովուրդ» օրաթերթին պատմում է, թե ինչպես են իրենց բակի ծաղկանոցները վերածվել բերքատու հողամասի: Նա խոսել է փոքրիկ այգեգործների հետ, պատմել, թե ինչպես են շրջափակված Արցախում զարկ տալիս սեփական նախաձեռնությանը եւ դիմագրավում շրջափակման մարտահրավերներին:

Այգեգործ եւ գաղափարի հեղինակ 14-ամյա Սյոմա Ավանեսյանը Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղից է: Հայրենի գյուղում ծնողներին օգնողի դերում էր, իսկ այստեղ արդեն սեփական նախաձեռնության տերն է:

Ծաղկանոցը բանջարաբոստանային այգի դարձնելու գաղափարը իրենն է, իսկ հետո գաղափարի իրագործման մասնակից դարձան նաեւ թաղամասի մյուս բնակիչները: Սյոմա Ավանեսյանը պատմում է, թե ինչպես առաջացավ շրջափակման պայմաններում սեփական այգի ունենալու միտքը:

«Քանի որ շրջափակում է, եւ ինչ-որ մթերքներ պակասում են, դա է պատճառը, որ սկսել եմ զբաղվել այգեգործությամբ, բանջարեղեն եմ աճեցնում: Ինձ օգնել են տատիկս եւ պապիկս, որ կարողանամ բանջարեղեն աճեցնել»:

Դպրոցական այգեգործի խոսքով՝ արդեն հասցրել է լոլիկ, վարունգ, կանաչիների տեսակների ցանել եւ նույնիսկ անդրանիկ բերքը համտեսել: Ուրախ է եւ հպարտ, հպարտ են նաեւ իր ծնողները: Ներկայումս դժվարություններ է առաջացնում միայն այգին ջրով մատակարարելու հարցը: Սյոմա Ավանեսյանը մանրամասն ներկայացնում է, թե ինչպես են բնակելի շենքի բարձր հարկերից խողովակով ջուր վերցնում ու այգին ջրում:

«Դժվարություն է դառնում հողամասը ջրելը, բայց մենք հարեւաններին խնդրում ենք՝ երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ հարկերից՝ իրենց ծորակից ջուր են տալիս, եւ խողովակով ջրում ենք մեր բոստանը, իսկ մենք նրանց տալիս ենք մեր հողամասի բարիքներից»:

Այգին ընդլայնելու պլաններ ունի: Սպասելու է մինչեւ վերջին բերքի հասունանալը, այնուհետեւ կրկին ոռոգելու է հողն ու թողնի հանգստանա մինչեւ հաջորդ տարի: Սյոմայի բակի ընկերներից Մելսիկը Հադրութ քաղաքից է: Հայրենի գյուղի կարոտն առնում է՝ այդ փոքրիկ ծաղկանոցում հողի հետ աշխատելով: Լոբու սերմերը հայրն է տվել, ուղղորդել՝ինչպես ցանի: Շուկայից գնել է կանաչու սերմեր, իսկ վարունգի սածիլները գյուղի բարեկամն է տվել: Նրա խոսքով՝ մինչ դասերի սկսվելը ողջ օրն անց էր կացնում բանջարանոցում, քաղհան անում (մոլախոտերից մաքրում հողակտորը), այգին մաքրում, ջրում եւ հիանում սերմերի՝ ծիլ տալու ընթացքով: Դասերից հետո շտապում է բանջարանոց նույնիսկ այն դեպքում, երբ այնտեղ աշխատանք չկա անելու: Մելսիկի համոզմամբ՝ շրջափակման պայմաններում սովորելը նրանը չէ, բանջարանոց ունենալն է ճիշտ:

Նշված այլընտրանքային միջոցները դեռ ամենը չեն, Սյոման եւ Մելիսկը շրջում են նաեւ հացի ու կաթի հերթերում: Հերթ են կանգնում եւ իրենց բաժին հացն ու կաթը ստանում: Նրանց պես հազարավոր երեխաներ այսօր ծնողների հետ համատեղ արժանապատիվ պայքարում են շրջափակման դեմ, միջոցներ փնտրում օրը նպատակային ու արդյունավետ դարձնելու եւ Արցախի այս իրավիճակից պատվով դուրս գալու համար:

Այս ամենը եւս մեկ անգամ հաստատում եւ ապացուցում է արցախցու ուժեղ կամքն ու միասնականությունը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՆՊԱՍՏՆԵՐ

ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԿՀՍՏԱԿԵՑՎԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ առաջարկվում է ֆունկցիոնալության խոր աստիճանի սահմանափակումով կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով անձանց ընտանեկան եւ սոցիալական նպաստի, ինչպես նաեւ հրատապ օգնության դիմումի հիման վրա նպաստը վճարել կանխիկ կամ անկանխիկ եղանակով:

Կառավարության հեղինակած ««Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը քննարկվել է ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի՝ սեպտեմբերի 5-ի հերթական նիստում:

Ըստ հիմնական զեկուցող, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանի՝նախագծով հստակեցվում են երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու պայմաններն օտարերկրյա քաղաքացի ծնողի համար եւ այն դեպքում, երբ նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է օտարերկրյա պետության իրավասու մարմինը, օտարերկրյա պետությունում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձի, նրա՝ օտարերկրյա պետությունում գտնվող ամուսնու, Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող դիվանագիտական ծառայության մարմիններում վարչատեխնիկական կամ սպասարկման անձնակազմում աշխատող անձի երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակել, եթե երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինը:

Նշենք նաեւ, որ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալը փաստել է, որ հստակեցվում են երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու եւ խնամքի նպաստի իրավունք տվող պայմանները:

Դավիթ Խաչատրյանը նշել է, որ նախագծով վերացվում են օրենքի իրավակիրառ պրակտիկայի ընթացքում ի հայտ եկած թերությունները: Ըստ հիմնական զեկուցողի՝նախագիծն ընդունվելու դեպքում «Պետական նպաստների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթները կհամապատասխանեցվեն «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին, կհստակեցվեն նաեւ մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի եւ երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման եւ վճարման գործընթացները: Հավելենք նաեւ, որ ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանի հավաստմամբ՝ օրենքի նախագծով հիմնականում կարգավորվում են պետական նպաստների նշանակման ոլորտում առկա խնդիրներն ու հարցերը: Հանձնաժողովականները կողմ են արտահայտվել նախագծի ընդունմանը: Քննարկման արդյունքում օրինագիծը ստացել է դրական եզրակացություն:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 15-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրապարակային ծանուցում

«Երեւանի Ապրանքային Բորսա» ՍՊԸ-ի հարթակում շարունակվելու է «Բի էս Թի» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, հետեւյալ լոտի աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 11.09.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ 10.01.2023թ.տեղադրված «Հրապարակային ծանուցման» մեջ նշված պայմաններով.

-ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն, Հրազդանի կիրճ, 81 հասցեում գտնվող 32,6 ք.մ. հասարակական շինություն, 29,1 ք.մ. ծածկ, աստիճանահարթակ, 17,2 ք.մ. /56,8 խ.մ./ պարիսպ եւ 0,047629 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝39000000 ՀՀ դրամ:

ԵՐԵՎԱՆՆ ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ՔԱՂԱՔՆԵՐԻՑ Է

Երեւանը մտել է ռուսաստանցիների աշնանային հանգստի ամենապահանջված ուղղություններից մեկի ցուցակ. տեղեկացրել է ՏԱՍՍ-ը՝ հղում կատարելով OneTwoTrip-ի վերլուծաբանների հետազոտությանը:

«Արտասահմանյան ուղղությունների շարքում աշնանն ամենամեծ պահանջարկ ունեն Ստամբուլը (արտասահմանյան բոլոր պատվերների 10,2 տոկոսը) եւ Երեւանը (4,5 տոկոս): Թոփ-5-ում տեղ են գտել նաեւ Դուբայը (2,8 տոկոս), Փարիզը (2,5) եւ Հռոմը (2,4): Պատվերների 2,1 տոկոսը բաժին է ընկնում Բանգկոկին, 2 տոկոսը՝ Ռիմինիին, 1,6 տոկոսը՝ Թբիլիսիին, 1,5-ական տոկոս՝ Մինսկին եւ Անթալիային»,- նշվել է հաղորդագրությունում:

Նշվել է, որ զգալիորեն ավելացել է Երեւանի պահանջարկը, պատվիրված տեղերի թիվն ավելացել է 45,2 տոկոսով՝ 2022թ. նույն ժամանակամիջոցի համեմատ: Ամենապահանջված արտասահմանյան ուղղությունների հնգյակում են նաեւ Հռոմը (2023թ. պատվերների թիվն ավելացել է 33,3 տոկոսով), Փարիզը (31,2), Բանգկոկը (40):

Մինսկի եւ Անթալիայի հյուրանոցներում պատվերները նվազել են 63,4 եւ 37,5 տոկոսով համապատասխանաբար:

ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

ԿԳՄՍ նախարարի հրամանով՝ հաստատվել են հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուստարվա օրինակելի ուսումնական պլանները:

2023-2024 ուստարում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝աշնանային՝2023 թվականի հոկտեմբերի 23-ից 29-ը ներառյալ, ձմեռային՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից 2024 թվականի հունվարի 7-ը ներառյալ, գարնանային՝ 2024 թվականի մարտի 25-ից 31-ը ներառյալ:

Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2023 թվականի հոկտեմբերի 16-ից 29-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից 2024 թվականի հունվարի 21-ը ներառյալ, գարնանայինը՝ 2024 թվականի մարտի 18-ից 31-ը ներառյալ:

Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2023 թվականի հոկտեմբերի 23-ից 29-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից 2024 թվականի հունվարի 21-ը ներառյալ, եւ գարնանայինը՝2024 թվականի մարտի 25-ից 31-ը ներառյալ:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆԵՔԸ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի կունենա Սրբալույս Մյուռոնի օրհնության արարողությունը: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է մանրամասներ արարողության մասին.

Մյուռոն-ԳԵՂԱՐԴ

Հայոց Եկեղեցու Ավանդության համաձայն՝ Վեհափառ Հայրապետը Սրբալույս Մյուռոնն օրհնում է նաեւ աստվածամուխ Ս. Գեղարդով: Սա նիզակի այն ծայրն է, որով Ղուկիանոս անունով հռոմեացի զինվորը խոցեց Հիսուսի կողը, որից բխեց ջուր եւ արյուն (Հովհ. 19. 34):

Մյուռոն-ԽԱՉ

Վեհափառ Հայրապետը Սրբալույս Մյուռոնը նախ օրհնում է Ս. Խաչով, որի մեջ զետեղված է մասունք Տիրոջ խաչափայտից: Ըստ Նարեկացու՝ խնկելի, պաշտելի եւ երանելի այս յուղը մարդուն որեւէ օգուտ չի տա, եթե տերունի կենսատու խաչով չտյառնագրվի: Մասունքակիր այս խաչը պատրաստվել է հատուկ Փիլիպոս Ա Աղբակեցի Կաթողիկոսի (1632-1655) համար 1652 թ.: Վերջին շրջանում մյուռոնօրհնությունը կատարվել է այս խաչով:

Մյուռոն-ԿԱԹՍԱ

126 տարի շարունակ Մայր Աթոռում գործածվում է Մյուռոնի արծաթե այս կաթսան, որը 1895 թ. հունվարի 1-ին Ս. Էջմիածնին է նվիրաբերել նորնախիջեւանցի վաճառական Աղա Գասպար Հարությունյան Կարապետօղլյանը: Այն պատրաստվել է Մոսկվայում՝ Պ. Օվչինիկովի արհեստանոցում: Կաթսայի վրա պատկերված են Քրիստոսի մկրտությունը Հովհաննես Մկրտչի ձեռքով, Աբգար արքայի մկրտությունը Ս. Թադեոս առաքյալի կողմից, արքայական ընտանիքի մկրտությունը Ս. Գր. Լուսավորչի ձեռամբ, Միածին Որդու էջքը, Մայր Տաճարը եւ Հոգեգալուստը:

Իսկ ի՞նչ է մյուռոնը

Մյուռոնի մասին խոսելիս հաճախ գործածում ենք «Սրբալույս» մակդիրը: «Սրբալույս Մյուռոն» ասելով՝նկատի ունենք, որ այդ Յուղից բխած լույսը սուրբ է, հոգեւոր եւ պայծառ, որը լուսավորում է ամեն քրիստոնյայի: Ժողովուրդը Ս. Յուղը նաեւ կոչում է «կանաչ Մյուռոն»:

Ըստ վերջին շրջանում ձեւավորված սովորության՝ Մյուռոնն օրհնվում է 5-7 տարին մեկ, բայց անհրաժեշտության դեպքում այն կարող է նաեւ խախտվել:

Ցավոք, պատմության ընթացքում ունեցել ենք նաեւ այնպիսի հայրապետներ, որոնք այդպես էլ չեն հասցրել կատարել սրբազան այս արարողությունը: Օր.՝ Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի Իզմիրլյան Կաթողիկոսը (1908-1910) իր կարճ գահակալության ընթացքում չհասցրեց մյուռոն օրհնել, քանզի 1909 թ. նշանակված արարողությունը հետաձգվեց Կովկասում բռնկված խոլերայի պատճառով: Նույն ճակատագրին արժանացան նաեւ երջանկահիշատակ Խորեն Ա Մուրադբեկյանը (1932-1938) եւ Գեւորգ Ջ Չորեքջյանը (1945-1954), որոնց նույնպես բախտ չվիճակվեց մյուռոն օրհնել խորհրդային կարգերի պատճառով:

Վազգեն Կաթողիկոսին հաջորդած Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1996 թ. սեպտեմբերի 8-ին Մայր Աթոռում կատարեց իր առաջին մյուռոնի օրհնությունը՝ կոչելով այն «Վերածնության մյուռոն»: Բայց հաջորդը տեղի ունեցավ ոչ թե 7 տարի հետո, այլ՝ 5, այսինքն՝ 2001 թ., երբ ազգովի նշում էինք քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակը: Վերոգրյալ բոլոր օրինակները եւ պատմական տվյալները ցույց են տալիս, որ ազգային-եկեղեցական կարեւոր եւ հիշարժան տարեթվերի, մյուռոնի պակասության կամ այլ հանգամանքների դեպքում Վեհափառ Հայրապետը կարող է մյուռոնօրհնեք կատարել՝ օգտվելով իրեն վերապահված իրավունքից:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին ԿԸՀ-ից հիշեցնում են, որ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ ընտրելու իրավունք ունեն նաեւ օտարերկրացիները, եթե առնվազն մեկ տարի հաշվառված են տվյալ համայնքում:

1. Օտարերկրյա քաղաքացիների համար անձը հաստատող փատաթուղթ են համարվում ՀՀ-ում օրինական բնակությունը հավաստող ժամանակավոր կացության քարտը,

մշտական կացության քարտը, ՀՀ հատուկ անձնագիրը:

2. ՌԴ քաղաքացիների համար անձը հաստատող փատաթուղթ են համարվում նաեւ ՌԴ քաղաքացիությունը հավաստող անձնագիրը՝ Երեւան համայնքի պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ նշումով:

3. Քաղաքացիությունը չունեցող անձանց համար՝ ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայականը,

ժամանակավոր կացության քարտը, ՀՀ հատուկ անձնագիրը:

4. Փախստական ճանաչված անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը:

Օտարերկրյա քաղաքացիների մասին տեղեկատվությունը վարում է Ներքին գործերի նախարարության միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունը:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԶՐԿՎԵՑԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2023 թ. սեպտեմբերի 4-ի հրամանով հաստատվել է 2023-2024 ուսումնական տարում բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով բարձրագույն ուսումնական հաստատությունների միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցման ենթակա մասնագիտությունների (կրթական ծրագրերի) եւ տեղերի ցանկը:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ԿԳՄՍՆ-ից, 187 ուսանող կօգտվի բուհերի միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցման հնարավորությունից:

ՀՀ կառավարության 2006 թ. հուլիսի 27-ի որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում նպաստի ձեւով ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ)) եւ պետական կրթաթոշակ տալու կարգի 5-րդ կետի պահանջների համաձայն՝ վերը նշված հաստատված տեղերը ենթակա են փոխատեղման:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ԳԱԹԱՅԻ ՓԱՌԱՏՈՆ՝ ԽԱՉԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Վայոց ձորի Խաչիկ գյուղում սեպտեմբերի 23-ին արդեն 7-րդ անգամ կանցկացվի ավանդույթ դարձած Գաթայի փառատոնը: Համայնքում առաջին անգամ փառատոն անցկացվել է 2013 թվականին. այդ ժամանակ այն կոչվել է Խաչիկ գյուղի տոն: Հաջորդ տարի որոշում է կայացվել այն վերանվանել եւ դարձնել Գաթայի փառատոն: Միջոցառման կազմակերպիչ Արուս Ներսիսյանի խոսքով՝ փառատոնը գյուղում սղասված իրադարձություն է:

«Փառատոնն ավարտվելուց հետո գյուղացիները պատրաստվում են արդեն հաջորդ տարվան: Այս տարի եւս մեծ ակտիվություն ենք ակնկալում: Նախորդ անգամ փառատոնն ունեցել է շուրջ 5000 այցելու, այս տարի սպասում ենք, որ հյուրերի թիվը դրանից ավելին կլինի: Միջոցառման այցելուները հնարավորություն ունեն համտեսելու ամենատարբեր տիպի գաթաներ: Գլխավոր զարդը լինելու 4 մ եւ ավելի տրամագծով մեծ գաթան: Նախորդ տարի գլխավոր գաթան ունեցել է 3 մ 70 սմ տրամագիծ: Միջոցառման մեկնարկը տրվելու է գաթայի օրհնության կարգով»,- ասաց Արուս Ներսիսյանը:

Փառատոնին լինելու են 30 տաղավարներ, որտեղ տեղացիները ներկայացնելու են իրենց արտադրանքը, բերքն ու բարիքը, ձեռքի աշխատանքը: Ամբողջ տարի պատրաստվում են փառատոնին. սա շատ մեծ հնարավորություն է իրենց համար, որ կարողանան գտնել հաճախորդներ բարիքներն իրացնելու համար: Հյուրերը հնարավորություն կունենան համտեսել նաեւ տարբեր կերակրատեսակներ:

Դրանից բացի, փառատոնի մասնակիցները կարող են տեղում օգտվել տարբեր տուրերից: Արուս Ներսիսյանը նշեց, որ Խաչիկ գյուղն ունի հարուստ կենսաբազմազանություն, հետաքրքիր պատմամշակութային, տեսարժան վայրեր: Այդ ամենից բացի, այցելուները կարող են օգտվել քայլարշավներից, այսինքն՝ այցելուների ժամանցի բազմազանությունը կապահովվի:

Արենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գեւորգ Սիմոնյանի խոսքով՝ Խաչիկը սահմանամերձ գյուղ է, այն հանրապետության դարպասներից է, եւ շատ կարեւոր է, որ շատերն այցելեն գյուղ, շփվեն գյուղացիների հետ, ծանոթանան պատմամշակութային վայրերին, իրենց ներդրումն ունենան գյուղի զարգացման գործում:

«Գյուղացիները բավական ոգեւորված են: Եթե նախորդ տարիներին համոզում էինք, որ մասնակցեն փառատոնին, ապա հիմա իրենք են շտապում մասնակցության հայտեր ներկայացնել: Խաչիկը դառնում է որպես առանձին զբոսաշրջային ուղղություն, նկատվում է տուրիստների ներհոսք: Բացվում են հյուրատներ, ոմանք տնտեսական գործունեություն են սկսում ծավալել: Ունենք ներդրողներ, որոնք ցանկանում են այգիներ հիմնել, գինու գործարան կառուցել»,- ասաց Գեւորգ Սիմոնյանը:

Համայնքապետարանն ուշադրության կենտրոնում է պահում ենթակառուցվածքների զարգացումը, նկատելի աշխատանք է կատարվել փողոցների լուսավորության, ճանապարհների բարեկարգման ուղղությամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՏԱՐԱԶԸ՝ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ ⇨

«Տերյան մշակութային կենտրոն»-ը եւ Հայաստանի պատմության թանգարանը համատեղ Բուլղարիայում մասնակցում են Ավանդական արհեստների XVIII միջազգային տոնավաճառին՝ ներկայանալով «Հայկական ավանդական տարազ» ցուցադրությամբ:

Միջոցառումը տեղի է ունենում Գաբրովոյի էթար տարածաշրջանային ազգագրության բացօթյա թանգարանում: Էթարը (Етър) գտնվում է Գաբրովո քաղաքից 8 կմ հեռավորության վրա՝ Սիվեկ գետի ափին, եւ ունի 46 ճարտարապետական կառույցներ, որոնք ներկայացնում են 25 հնագույն մասնագիտություններ:

ՀԱՅԿԱԿԱՆԸ՝ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Եգիպտոսում Հայաստանի դեսպան Հրաչյա Փոլադյանը հանդիպում է ունեցել Եգիպտոսի մշակույթի նախարար Նեվին Յուսեֆ ալ-Քիլանիի հետ: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են Հայաստանի արտաքին գործերի նախարարությունից:

Բարձր գնահատելով երկու բարեկամ երկրների միջեւ մշակութային ոլորտում համագործակցության լավ ավանդույթները՝ զրուցակիցները պատրաստակամություն են հայտնել համատեղ ջանքեր գործադրել փոխգործակցության հետագա զարգացման համար: Այս կապակցությամբ ՀՀ դեսպանը առանձնահատուկ կարեւորել է երկու երկրների միջեւ համապատասխան իրավապայմանագրային դաշտի թարմացումն ու լրամշակումը:

Հավելենք, որ դեսպան Փոլադյանը նշել է, որ հայկական կողմը նախատեսում է աշխատանքներ իրականացնել՝ գալիք տարում Եգիպտոսում Հայաստանի մշակութային օրեր անցկացնելու ուղղությամբ: Համագործակցության առավել ընդլայնման համար կողմերը կարեւորել են նաեւ պաշտոնական պատվիրակությունների եւ մշակութային խմբերի փոխայցելությունների աշխուժացումը:

Հանդիպման ընթացքում դեսպան Փոլադյանը նախարար Նեվին ալ-Քիլանիին է փոխանցել ընթացիկ տարվա հոկտեմբերին Հայաստանում կայանալիք «Կին քաղաքական առաջնորդների ժողովրդավարության, խաղաղության եւ անվտանգության հարցերով գագաթնաժողովի» մասնակցության հրավերը: Շնորհակալություն հայտնելով հրավերի համար՝ նախարարը հետաքրքրություն է հայտնել գագաթնաժողովին մասնակցության առնչությամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՇԱԽՄԱՏՈՒՄ

Հայաստանի 36 շախմատիստ կմասնակցի սեպտեմբերի 5-ից 14-ը Ռումինիայի Մամայա քաղաքում անցկացվելիք Եվրոպայի պատանեկան առաջնությանը:

Առաջնությունը կանցկացվի 12 տարիքային խմբերով՝ Մ-8 տղաներ, Մ-10 տղաներ, Մ-12 տղաներ, Մ-14 տղաներ, Մ-16 տղաներ, Մ-18 տղաներ, Մ-8 աղջիկներ, Մ-10 աղջիկներ, Մ-12 աղջիկներ, Մ-14 աղջիկներ, Մ-16 աղջիկներ, Մ-18 աղջիկներ: Հայաստանը կներկայացնեն 26 տղաներ եւ 10 աղջիկներ:

«ՄԱՆՉԵՍԹԵՐ»-ԻՑ ՏԵՂԱՓՈԽՎԵՑ

Կոտդիվուարցի պաշտպան Էրիկ Բային անգլիական «Մանչեսթեր Յունայթեդից» տեղափոխվեց թուրքական «Բեշիկթաշ». հաղորդում է ակումբի մամուլի ծառայությունը:

2016 թվականին «Մանչեսթեր Յունայթեդը» Էրիկ Բայիի համար իսպանական «Վիլյառեալին» վճարել էր 38 միլիոն եվրո: Այժմ 29-ամյա ֆուտբոլիստի տրանսֆերային արժեքը գնահատվում է 5 միլիոն եվրո:

Անցած մրցաշրջանը Էրիկ Բային վարձակալությամբ անցկացրել էր ֆրանսիական «Մարսելում»:

ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄՐՑԱՎԱՐՆԵՐԸ

«Եվրո-2024»-ի ընտրական մրցաշարի Թուրքիա-Հայաստան հանդիպումը կսպասարկեն իտալացի մրցավարներ՝ Դանիելե Օրսատոյի գլխավորությամբ: Նրան կօգնեն Չիրո Կարբոնեն եւ Ալեսանդրո Ջիալատինին: Չորրորդ պաշտոնյան է Անտոնիո Ռապուանոն. հաղորդում է ՈՒԵՖԱ-ի կայքը:

5-րդ տուրի Թուրքիա-Հայաստան հանդիպումը տեղի կունենա սեպտեմբերի 8-ին Էսկիշեհիր քաղաքում եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով 22:45-ին: D խմբի առաջատարը Թուրքիան է, որը 4 խաղում վաստակել է 9 միավոր: Հայաստանի հավաքականը 3 խաղից հետո 6 միավորով երկրորդն է: Խորվաթիան անցկացրել է 2 հանդիպում եւ 4 միավորով երրորդն է: Նույնքան միավոր ունի չորրորդ տեղում ընթացող Ուելսը, որն անցկացրել է 4 հանդիպում: Լատվիան երեք պարտությունից հետո եզրափակում է մրցաշարային աղյուսակը:

ՄԻԱՑԱՎ ԹԻՄԻՆ

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքական հրավիրված Երեւանի «Նոայի» պաշտպան Սերգեյ Մուրադյանը միացավ Հայաստանի մինչեւ 21 տարեկանների հավաքականին. հաղորդում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի մամուլի ծառայությունը:

2025 թվականի Եվրոպայի մինչեւ 21 տարեկանների առաջնության որակավորման փուլում Հայաստանի հավաքականը սեպտեմբերի 8-ին կընդունի Ալբանիայի, սեպտեմբերի 12-ին՝ Չեռնոգորիայի հավաքականին:

Երկու հանդիպումներն էլ տեղի կունենան Աբովյանի Վահագն Թումասյանի անվան մարզահամալիրում եւ կմեկնարկեն 19:00-ին:

● *Սեպտեմբերի 10-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Լոնդոն Blues» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 20:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԹՈՇԱԿ

ՀԱՐՑ. Ո՞ր ուսանողներին է կրթաթոշակ տրվում:
Տիգրան Սահակյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է, որը մրցութային կարգով տրվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողին՝ գերազանց եւ լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսեւորելու համար, ինչպես նաեւ սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին:

Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներ են համարվում մասնակցությունն ուսումնական հաստատության ուսանողական, հասարակական աշխատանքներին, զեկուցումները, ռեֆերատները, հրատարակած աշխատանքները (գիտական ամսա-գրերում եւ զանգվածային լրատվության միջոցներում), մասնակցությունը միջբուհեջային, քաղաքային, հանրապետական եւ միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին, այլ ստեղծագործական նախաձեռնություններ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում պետական կրթաթոշակը տրվում է ուսանողական նպաստի համակարգում ընդուն-ված ուսանողին: Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չֆինանսավորվող ուսումնական հաստատություններում կրթաթոշակի հատկացման մասին որոշումն ընդունում է հիմնադիրը:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Հեղինակային իրավունքը կարո՞ղ է գրանցվել:
Սուրեն Թորոսյան (65 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հեղինակային իրավունքի պահպանությունը տրամադրվում է ավտոմատ կերպով եւ կախված չէ այդ իրավունքի պաշտոնական հաստատագրումից, ստեղծագործության գրանցումից եւ որեւէ այլ գործողության կատարումից, ուստի Մտավոր սեփականության գործակալությունը չի իրականացնում հեղինակային իրավունքի օբյեկտների գրանցման գործառույթ:

Սակայն հեղինակային իրավունք եւ հարակից իրավունքներ կրողների իրավունքների պաշտպանման նպատակով գործում են գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություններ:

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հեղինակային իրավունք եւ հարակից իրավունքներ կրողների իրավունքների պաշտպանման նպատակով գործող գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունները ստեղծվում են ուղղակիորեն հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների տերերի կողմից եւ գործում են ստացված լիազորությունների շրջանակներում («Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 63-64-րդ հոդվածներ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սաուդյան Արաբիայի «Ալ Նասրի» 38-ամյա հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն միացել է Պորտուգալիայի հավաքականին եւ կմասնակցի «Եվրո-2024»-ի ընտրական մրցաշարի առաջիկա հանդիպումներին:

«Հրաշալի է տուն վերադառնալը: Առավելագույն մոտիվացիա եւ լիակատար կենտրոնացվածություն առաջիկա երկու խաղերում «Եվրո-2024»-ի ճանապարհին»,- «Թվիթեր»-ում գրել է Ռոնալդուն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________
Ազգանուն՝ ______________
Առաքման հասցե՝ ______________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+ 9 + 12 +28 + 31
Կոտայքի լեռներ	+ 9 + 11 +26 + 29
Կոտայքի նախալեռներ	+17 + 20 +30 + 32
Գեղարքունիք	+10 + 14 +26 + 30
Լոռի	+13 + 17 +24 + 29
Տավուշ	+14 + 19 +27 + 30
Արագածոտնի լեռներ	+ 9 + 12 +27 + 31
Արագածոտնի նախալեռներ	+18 + 20 + 30 + 34
Արարատ	+18 + 20 +37 + 38
Արմավիր	+15 + 19 +37 + 38
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 12 +28 + 30
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 20 +35 + 38
Սյունիքի հովիտներ	+19 + 21 +32 + 37
Սյունիքի նախալեռներ	+12 + 15 +24 + 28
ԼՂՀ	+18 + 21 +32 + 37
Երեւան	+18 + 20 +26 + 28

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.9.2023**
Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*